կաղկանձոցը, արջերի մրթմրթոցը եւ քաղցած դայլերի ոռնոցը հարազատ ու ընտանի մի չեչտ ունին աստղերի ցոլքի տակ ստեպների սրտին:

Եւ ճմեռն ստեպներո՛ւմ...

Միապաղաղ ճերմակ տարածութիւն, ուր ձիւնը ճռնչում է մարոզի*) սաստկութիւնից, անտառները սպիտակ պատան հագած ուրուականների պէս եռում են անպարփակ հորիզոնների տակ, եւ խրճիթները սոկում ու լուծւում են հարթութեան մէջ եւ դաշտերում խուսափող սահնակների յետեւից քաղցած դայլերի վոհմակն է սլանում:

Եւ յետոյ՝ անսահման մելանխոլիան դաշտերի, ուր լուսաբացին եւ վերջալոյսին գոյները անհուն նիւանսներ ունին եւ կիրք չունին: Ու լուսնկայ գիշերներ կան դիւթիչ, աստղազարդ ու խաղաղ, երբ անեզր ու արծաթագոծ հարթութեան ծածուկ հեւքն է լսւում եւ հսկայ բիթմը մի խօսուն լռութեան:

Ոչ մի երկրում գիշերներն այնպէս խորունկ են ու խորհրդաւոր, որպէս Ռուսիայում, ուր լռութիւնը միշտ մի կրօն է աստուածախնդիր հոգիներին եւ աստղերի ցոլքերով նուաճուած խաւարը մի անհուն երաժշտութիւն: Ոչ մի աշխարհում ճամբան այն երազական կախարդանքն ունի, ինչպէս Ռուսիայում, ուր նա գալարւում, ձգւում է անեզր տարածութեան մէջ եւ իրար յաջորդող տեսարանների նոյնութեամբ քաշում է քեզ միշտ հեռու ու հեռու մի ցնցող կոնտրաստի ծարաւով: Ռուսական ճամբան մի խեղդող հարցական է ձգուած տարածութեան մէջ, որի պատասխանը յաւիտենապէս խուսափող, ու յաւիտենապէս դիւթիչ մնում ու քաշում է:

Դեռ նշանաւոր ռուս բանաստեղծն է երգել այդ գիշերն ու ճամբան.

«Ու դուրս եմ գալիս. ես մենակ եմ ճամբին,
«Մշուշի մէջ քարուտ ուղին է կայծկլտում.
«Գիշերը հանդարտ է, ծովածաւալ դաշտն է լսում աստծուն.
«Եւ աստղը աստղի հետ զրոյց է անում:
«Հիասքանչ երկինքը փռուած է վեհօրէն,
«Կապտաւուն ցոլքերի մէջ երկիրն է հանդչում»:

Այսպէս է ռուսական բնութիւնը:

Հապա իր պատմութիւնը... թաթարական բռնութիւն, ճորտութիւն, ցարիզմ եւ բոլորն էլ զարերով, որոնցից իւրաքանչիւրը առանձին վերցրած բաւական է, որ արդարութեան ծարաւ եւ միստիկ բնութեան մէջ ապրող մի ժողովրդի հոգին ինքն իր մէջ ծռի:

Հարթութիւնները միշտ կրօնների եւ սրբասպասաւոր երգերի որրան են:

Լսե՞լ էք ռուս մարդու երգը. նրա առաջին յանկերն իսկ քեզ բռնում են ու քարացնում, ինչպէս յանկարծակի առջեւդ բացուող մի դիւթիչ տեսարան, ապա կամաց- կամաց մշուշի մէջ փռւում է ստեպը, ահա եւ վերջը, այդ անուշ ու թախծոտ finale-ը, որ դողդողում է մեղմօրէն որպէս հովերի շարժած լար, որպէս հոգեվարք մանկան մեղմիւ զոցուող աչքեր, որպէս անդարձ հեռացող սիրելու ոտնաձայն:

Ռուսական երգը հարթութեան մէջ ձգուող անծայր ու քաշող ճամբան է, իր անզօրութեան վրայ լացող անհունը, իր մեծութիւնից ու տառապանքից փախչող մի տիտան:

Ռուս երգը ռուս ստեպի հեծկլտանքն է եւ ստեպը՝ ամրողջ ռուս մարդն է:

* * *

Եւ ահա այս մելամաղձոտ, այս անպարփակ տարածութեան մէջ՝ ուր ասես մի մեռած աստծու վրայ յաւիտենական սուգ կայ, ծընւում, աճում, շարժւում, գործում, խորհում է մարդը:

Ռուս մարդը...

Եւ միշտ որեւէ բռնութեան տակ, արտաքին, կամ ներքին:

Տեսե՞լ էք երբ եւ իցէ ռուս գեղջուկը, այդ միշտ ծեր-մանուկը, երբ նա մեն-մենակ քայլում է դաշտերով: Այնքան ասես ճամբայ չկայ, այլ կայ մի անմիտ տարածութիւն, որ քաշում է անդիմադրելի դիւթանքով: Ցառաջ այդ մարդը ճամբով չի էլ գնում, այլ ինչպէս պատահի, ուր քայլերն են տանում, կամ ինչ-

*) Սառնամանիք: